№ 149 Օգոստոսի 13 (25) 1881 Օգոստոսի 13 (25) № 149

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրագրաքիր պիտում են ազգակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրախանչիր բառին 2 կոպէկ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խնդրում ենք մեր բաժանորդներին, որոնք «Մշակի» այս տարվայ բաժանորդագիրը չեն վճարել, շուտով հացնել մեզ իրանց վրա մնացած պարտքը. Զը վճարածների ցուցակը դեռ մեծ է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր հարուստները։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Новая Газета» լրագրի թղթակցութիւնը։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իտալիա։ Նամակ Թիւրքիայից։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՌՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։

ՄԵՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ

—

„Մշակի“ ներկայ համարում տպում ենք Ս. Պետերբուրգից ստացած մի լուր որ հարուստ հայերից մէկը կտակել է Նոր-Նախիջևանի բէալական դպրոցին մի շատ մեծ գումար։ Մեր թղթակիցը հիացած է այդ տեսակ բարերարութենից։

Մենք չենք բաժանում մեր թղթակցի ուրախութիւնը և ահա ինչ պատճառով։

Նոր-Նախիջևանը մի հայոց կոլոնիա է եւրոպական Ռուսաստանում, հայերը այդտեղ ապրում են առանձնացած, եթէ կարելի է ասել կղզիացած իրանց համաբիւնների մեծամասնութենից։ Եթէ այսօր չէ, անպատճառ վաղը նրանք կօտարանան և անկարելի է որ չօտարանան։ Մի ժողովուրդ, որ չէ ապրում իր պատմական հողի վրա, շրջապատված չէ իր համաբիւնների տարրով, այդ տեսակ ժողովուրդ կորած է ազգի մեծամասնութեան համար։ Բոլորովին զարմանալի չի լինի, եթէ մի ժամանակ Նոր-Նախիջևան, Մօզդօկ, Ղզլար և սրանց պէս հայոց այլ կոլոնիաներ, որոնք ցրված էն եւրոպական Ռուսաստանի երեսի վրա, կը լուծվեն ռուս տարրի մէջ։ Դա կը լինի մի բնական երևոյթ։ Կարծել որ նրանք միշտ հայ կը մնան,—երեխայութիւն, միամտութիւն է։ Մի ժողովուրդ կարող է պահպանել իր ազգութիւնը, իր մայրենի լեզուն միայն ապրելով իր մայրենի, պատմական հողի վրա, կամ խիտ կերպով բնակվելով մի երկրի մէջ, որտեղ բացի քաղաքներից նոյն ազգին պատկանած և բազմաթիւ գիւղեր կան, որոնք կապված են քաղաքների հետ երկրի արդիւնաբերութեան, տնտեսական անխզելի կապերով, և այդ պատճառով կապված են և բարոյական, հասարակական հաստատ կապերով։

Մի մեծ գումար ընծայել մի որ և է Նոր-Նախիջևանի դպրոցի համար, ի հարկէ, մի մարդասիրական գործ է, ընդհանուր տեսակէտից նայած, բայց ազգասիրական գործ չէ կարող համարվել, որովհետև վաղուց արդէն մենք պէտք է ընտելանայինք այն մտքին, թէ Կովկասեան սարերի այն կողմն ընկած միմեանց մէջ և Անդրկովկասի հետ ոչինչ կապ չունեցող հայոց կոլոնիաները պէտք է մի ժամանակ օտարանան։ Լուսաւորչական կրօնին պատկանելը այդտեղ ոչինչ նշանակութիւն չունի։ Եթէ մի ժամանակ պատահէր որ Անդրկովկասի բոլոր հայերը փոխէին իրանց կրօնը, դարձեալ նրանք ապրելով պատմական Հայաստանի հողերի վրա, և խօսելով մայրենի լեզուով, հայ կը մնային։ Իսկ Նոր-Նախիջևանի հայերը, թէկուզ միշտ լուսաւորչական դաւանութեան մէջ մնային, դարձեալ հանգամանքների ոյժին ենթարկվելով, պէտք է օտարանան, կտրված լինելով հայրենի հողից, խիտ կերպով բնակվող համաբիւններից և կղզիացած լինելով մի այլ տարրի մէջ։

Այդ պատճառով ազգային տեսակէտից մենք ոչինչ նշանակութիւն չենք տալիս հարուստ ստավրապօլցի պ. Պօպովի կտակին։ Մեզ համար նա ոչինչ նշանակութիւն չունի. մեզ համար նրա ընծայած հարիւր հազար լուբլ աւելի քիչ նշանակութիւն ունի, քան թէ մի հինգ մանէթ որ ընծայվում է Ղարաքիլիսի, Ալէքսանդրապօլի կամ Երևանի մի որ և է դպրոցին։

Այդպէս յարմար է առհասարակ մի հայեացք գցել մեր հարուստների անպատակ գործունէութեան վրա։

Մեր հարուստները կամ բոլորովին հասկան, անտարբեր են լինում դէպի ազգը, կամ եթէ յանկարծ վառվում են ազգասիրական զգացմունքով, այնքան անշնորհ կերպով են անում իրանց բարերարութիւնները, որ իրանց այդ բարերարութիւններով արջի ծառայութիւն են անում ազգին, աւելի ոչինչ։

Պատճառն այն է որ մեր բոլոր հարուստները ազգա, զրկեթէ անզրագէտ մարդիկ են, որոնք ոչ թէ միայն ոչինչ ուսում չունեն, բայց և հազիւ ստորագրել գիտեն իրանց ազգանունը։ Նրանք իրանց միլիոնները ձեռք են բերել այլ և այլ ճանապարհներով, միմիայն հային յատուկ ճարպիկութեան, բնական խելքի շնորհով։

Բայց մի և նոյն ժամանակ սաստիկ մեծ կարծիք ունեն իրանց մասին, սաստիկ ինքնահաւան են։ Նրանք երևակայում են որ ամեն բան գիտեն, որովհետև կարողացան այլ և այլ ճանապարհներով հարստանալ։ Այդ պատճառով, երբ յանկարծ այդ տեսակները վճռում են որ և է բարերարութիւն անել,—այլ ևս չեն դիմում ոչ ոքին, ոչ ոքից խորհուրդ չեն հարցնում, չեն կամենում խոստովանվել, որ թէև ոսկու քսակներ են, բայց տգէտ և անզարգացած մարդիկ են։

Այդպիսով ազգի համար ոչինչ չարած ժամանակ, նրանք աւելորդ և անպէտք են ազգին,—իսկ բարերարութիւն արած ժամանակ, այնքան անշնորհ և անտեղի բաներ են անում, լայն աչքով չանելով հասկացող մարդկանցից խորհուրդ հարցնելու, որ նրանց արածը դառնում է վնասակար։

Մի որ և է հարուստ կարծում է մեծ բարերարութիւն է անում ազգին իր ընտրութեամբ երիտասարդներ ուղարկելով արտասահման։ Ինչ կը դառնան նրա սանները,—դեռ կը տեսնենք։ Խելքը փչածին պէս մեծ գումարներ է նուիրում ֆիզիկական մեքենաներ և փիլիսոփայական գրքեր ուղարկելու այնպիսի դպրոցներին, որտեղ ոչ այն մեքենաները կարող են գործ ածել, ոչ էլ այն գրքերը կարդալ.... Եւ բոլորը անգործադրելի է մնում և վերջը փչանում։

Մի Անանով հիմնում է մի օրիորդական դպրոց Թիֆլիսում, որտեղ ձրիաբար ընդունվում են ամենաաղքատ հայ աղջիկներ, որոնց սովորեցնում են այլ և այլ գիտութիւններ, բայց որոնց չեն սովորեցնում ոչ մի պիտանի արհեստ։ Եւ այդ տեսակ աղջիկները շպրտվում են կեանքի մէջ, առանց կարողանալու իրանց համար մի կտոր հաց հայթայթելու։ Նոյն պարոնը ընծայեց իր դպրոցի գրադարանին այնպիսի գրքեր, որոնց թւում կարծեմ Լապլասի աստրոնոմիա կայ, որոնց գործածել և հասկանալ ոչ թէ միայն աշակերտուհիները չեն կարող, բայց նոյն իսկ դպրոցի տեսուչը և ուսեալ հոգաբարձուները։ Եւ դրա վրա նա դնում է ապարդիւն կերպով մեծ փողեր.... Պատճառն այն է, որ հարուստ հայ մարդը այնքան ինքնահաւանութիւն ունի, որ չէ կարող ոչ ոքից խորհուրդ հարցնել։

Երբ հիմնվում էր Անանեան դպրոցը, մենք լրագրի միջոցով բողոքեցինք դպրոցի ուղղութեան դէմ, առաջարկելով որ ի զուր չը սպանեն աղքատ խարբուխցի և հալաբարցի հայ աղջիկներին, նրանցից բարի շնորհներ շինելով, այլ սովորեցնեն նրանց պիտանի արհեստներ։ Մեր առաջարկութեանը պ. Անանով պատասխանեց մեր լրագրի մէջ արհամարհանքով։ Ի հարկէ հարուստ մարդը երևակայում է որ ամենքից խելօք է։ Մենք էինք որ առաջարդիկ ունեմ, չը՞գիտեմ ինչ անեմ.... Առնող չը կայ.... Հիմակվայ երիտասարդները էլ չեն նայում ոչ աղջկայ սիրունութեան վրա, ոչ էլ նրա ուսման վրա։ Աղջիկը որ փող չունի,— էլ նրան ոչ ոք չէ ուզում. կարող է դնալ ջուրն ընկնել, կամ կուսանոց մտնել։

Ծանօթանում եմ մի վաճառականի հետ։

—Գործերը լաւ են գնում, պարոն Կիրակոսեան։

—Էլ մի ասէք.... Մոլորված ենք մնացել. առուտուր չը կայ, ամեն բան թանգ. ամբողջ օր այդպէս անգործ նստում ենք։

—Թքեցէք վաճառականութեան վրա, արուեստաւոր դարձէք։

—Ի՞նչպէս արուեստաւոր դառնամ, ոչ մի արհեստ չը գիտեմ։

Մի օր մի աղջիկ դիմում է ինձ, ինձանից խորհուրդ հարցնելու համար թէ ինչով պարապի, ինչ ասպարէզ ընտրի։

—Ուսում առել էք։

—Ինչպէս չէ, Ն. քաղաքի օրիորդաց դպրոցում ուսում եմ աւարտել,

—Ի՞նչ գիտէք։

—Ամեն բան գիտեմ։

—Օրինակ։

—Ռուսաց լեզու, հայոց լեզու, թւաբանութիւն, կրօն և պար։

—Աղախին դարձէք։ Պատուաւոր ընտանիքում աղախին լինելը անպատիւ բան չէ։

ՖԵԼԻԵՏՕՆ

Իմ լռութեան պատճառը։—Բաֆֆիի, Նիկոդոսեանի և իմ ճանապարհորդութիւնը։— Ճանապարհորդութեան հետևանքները։— Ընդհանուր դժգոհութիւն։— Պառաւ կին։— Մի տիկին։— Մի վաճառական։— Մի օրիորդ։ — Հարուստ կալուածատիրոջ հետ խօսակցութիւնս։— Գաւառական ինտելիդէնցիա։— Պաշտօնեաներ և համալսարանական երիտասարդութիւն։— Աշխարհականներն ու հոգևորականները։— Քահանաների և վարդապետների զանգատները։— Մեր դպրոցները։— Մանկունի։

—

Վերջապէս ես կրկին Թիֆլիսումն եմ, վերջապէս կրկին տեսնում եմ այդ սիրելի քաղաքը և նրա սիրելի բնակիչներին։

Այդ խօսքը ձեզ, յարգելի ընթերցող, պարզ կերպով բացատրում է իմ մի քանի ամիսների լռութեան պատճառը. ես բացակայ էի Թիֆլիսից, ես ճանապարհորդում էի։ Եւ ինչի չը պէտք է ճանապարհորդէի, քանի որ խմբագրութեան բոլոր անդամները ճանապարհորդում են։ Նիկոդոսեանը Կ. Պոլսում նստած՝ զմայլվում է պոլսեցիների խելքից, ազգասիրութիւնից, անձնուիրութիւնից, քաջասրտութիւնից, Բաֆֆին իր կողմից ոգևորվում է Ղարաբաղի բնութեան գեղեցկութիւններով և նիւթեր է հաւաքում իր բանաստեղծական գրուածքների համար, իսկ ես ֆելիետոնների համար նիւթ չը գտնելով այդ միակերպ Թիֆլիսում, թողեցի մի քանի ամսով մեր երևելի քաղաքը և ճանապարհ ընկայ քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, պատեցի գրեթէ ամբողջ Անդրկովկասի մէջ, բայց ցաւելով պիտի խոստովանվեմ զուր էր իմ ճանապարհորդութիւնս.... Ոչ մի տեղ նիւթ չը գտայ ֆելիետոնների համար....

Այո, շատ և շատ սխալվեցի. ես դժգոհ էի Թիֆլիսից, բայց հաւատացնում եմ ձեզ, ընթերցող, որ մեր երկրի մնացած քաղաքներումն ու գիւղերում աւելի մխիթարութիւն չը գտայ։

Տխուր եմ վերադառնում Կովկասեան մայրաքաղաքը, ափսոսալով կորած փողերս ու կորած ժամանակս։

* * *

Ուր որ գնացի,— ի հարկէ առանց ոչ ոքին ասելու թէ ես Ասիացի եմ,— ամեն տեղ տեսայ նոյն անմխիթար, տխուր երևոյթը. ամեն տեղ ընդհանուր ապատիա, անտարբերութիւն դէպի ամեն տեսակ հասարակական և ազգային հարցերը, մարդկանց միմեանց մէջ ինտրիգաներ, երկպառակութիւն, թշնամութիւն, բամբասանք, գանգատներ կեանքի դարդակութեան, նիւթական դժուարութիւնների վրա և այլն....

Մարդիկ այնքան դժգոհ են, այնքան կորցրել են իրանց գլուխը, այնքան մոլորվել են, որ պատրաստ են հաւատալ ամեն տեսակ յիմարութիւններին....

Եթէ մի լրագիր հանաքի համար տպի թէ շուտով աշխարհը պիտի վերջանայ, — մարդիկ պատրաստ են այդ բանին էլ հաւատալ.... Ամենքը ախ ու վախ են քաշում, ոչ ոքի մէջ եռանդ չը կայ, ոչ ոք չունի մի որոշ նպատակ իր կեանքի մէջ։ Իսկ եռանդի մնացորդներ ունեցողներն էլ նուիրում են իրանց վերջին ոյժերը քէֆ անելու, շռայլ կեանք վարելու, անանպատակ փող վատնելու վրա։

* * *

Փորձեցի ամեն դասակարգի և երկու սեռի անձանց դիմել։

—Մայրիկ, ինչպէս էք, հարցնում եմ մի աղքատ պառաւ կնոջ։

—Է՛հ, ինչպէս պէտք է լինենք. ջուրն եկել է ու մեզ տարել։ Մարդս հիւանդ պառկած է, էլ պահել մեզ չէ կարող, մենք ենք նրան պահում։ Որդուս ուսում տուեցի,— գնաց ու կորաւ։ Աղջիկս մեր շկոլում ուսում աւարտեց,— ինչին է պէտք. ոչ արհեստ գիտէ, ոչ էլ ինձ օգնել կարող է տան անտեսութեան մէջ. կերուկուր պատրաստել չը գիտէ, լուացք լուանալ լայեղ չէ անում ու չը գիտէ էլ.... քանդվի հիմակվայ ուսումը որ մեր աղջկերանցն են տալիս...

Ծանօթանում եմ միջին դասակարգի մի կնոջ հետ։

—Ա՛խ, պարոն, թէ իմանայիք, որքան ծանր է մեր դրութիւնը, սկսում է նա գանգատվել։ Աղջիկ ունեմ, չը՞գիտեմ ինչ անեմ.... Առնող չը կայ.... Հիմակվայ երիտասարդները էլ չեն նայում ոչ աղջկայ սիրունութեան վրա, ոչ էլ նրա ուսման վրա։ Աղջիկը որ փող չունի,— էլ նրան ոչ ոք չէ ուզում. կարող է դնալ ջուրն ընկնել, կամ կուսանոց մտնել։

Ծանօթանում եմ մի վաճառականի հետ։

—Գործերը լաւ են գնում, պարոն Կիրակոսեան։

—Էլ մի ասէք.... Մոլորված ենք մնացել. առուտուր չը կայ, ամեն բան թանգ. ամբողջ օր այդպէս անգործ նստում ենք։

—Թքեցէք վաճառականութեան վրա, արուեստաւոր դարձէք։

—Ի՞նչպէս արուեստաւոր դառնամ, ոչ մի արհեստ չը գիտեմ։

Մի օր մի աղջիկ դիմում է ինձ, ինձանից խորհուրդ հարցնելու համար թէ ինչով պարապի, ինչ ասպարէզ ընտրի։

—Ուսում առել էք։

—Ինչպէս չէ, Ն. քաղաքի օրիորդաց դպրոցում ուսում եմ աւարտել,

—Ի՞նչ գիտէք։

—Ամեն բան գիտեմ։

—Օրինակ։

—Ռուսաց լեզու, հայոց լեզու, թւաբանութիւն, կրօն և պար։

—Աղախին դարձէք։ Պատուաւոր ընտանիքում աղախին լինելը անպատիւ բան չէ։

կեցինք այդ դպրոցի տեսչի պաշտօնի համար պ. Զիգիանեանին, կարծելով որ ժողովրդի մարդ և մի և նոյն ժամանակ տեխնիկ լինելով, նա կը հասկանայ որ Խարբուխի թաղի հայ աղջկայ համար, որ շապիկ չունի հագնելու, բարիշնեա դառնալ աւելորդ է, աւելորդ է ֆիզիկական աշխարհագրութիւն սովորեցնել նրան, այլ պէտք է նրան զինաւորել մի զէնքով, արհեստով, որ նա կեանքի մէջ ապրել կարողանայ և որ դպրոցից դուրս գալուց յետոյ նա և նրա ծնողները օրհնեն և ոչ թէ անիծեն իրանց բարերարներին,—բայց պ. Զիգիանեան յայտնվեցաւ կամ անընդունակ, կամ վախկոտ՝ հաստատամտութեամբ իր պրոգրամը առաջարկելու բարերարին։

Այժմ լսում ենք որ Սանասարով մի դպրոց է կամենում հիմնել Կարինի մէջ։ Երևակայում ենք թէ ինչ դպրոց կը լինի, ո՞րքան յարմար կը լինի նա Թիւրքաց Հայաստանի պէտքերին։

Սանասարով, ի հարկէ, ոչ ոքից խորհուրդ չի հարցնի, ինչպէս անում են մեր բոլոր հարուստները, հասարակական կարծիքը նրա համար զրօ է, որովհետև գրըպանում շատ ռոսկիներ ունի, լրագիրները նա երբէք չէ կարդում, կարծեմ կարդալ էլ չը գիտէ,—իսկ եթէ մէկից խորհուրդ կը հարցնի, այդ կը լինի պ. Կարապետ Էզովից, որ նոյնքան հասկացողութիւն ունի Հայաստանի վրա և ճանաչում նրա պահանջները, որքան մենք հասկացողութիւն ունենք Զինաստանի վրա ու նրա կարիքներն ենք ճանաչում։

Մի խօսքով մեր ազգ, անգրագէտ, անուս, ինքնահաւան հարուստները կատարեալ ցաւ են մեր գլխին։ Կամ ոչինչ օգուտ չեն տալիս ժողովրդին, կամ եթէ սկսում են բարերարութիւններ անել,—միայն վնաս են բերում ազգին։

Կարելի է ընդունել որ հարուստները և հոգևորականները մի հասարակութեան մէջ մտաւոր և բարոյական առաջնորդներ պէտք է լինեն։ Բայց ի՞նչ կը լինի այն ազգի դրութիւնը, որի մէջ հոգևորականները և հարուստները հասարակութեան ամենատգէտ, անգրագէտ մասն են կազմում....

Ի՞նչ առաջադիմութիւն կարելի է սպասել այդ տեսակ ազգից, մանաւանդ երբ ազգը դեռ այնքան յիմար է, որ ինքն ոչինչ չէ անում, իսկ ամեն բան, ամեն փերկութիւն իր տգէտ հոգևորականներից և կարդալ գրել չիմացող, փքված հարուստներից է սպասում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„НОВАЯ ГАЗЕТА“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Թիֆլիսից „Новая Газета“ լրագրին գրում են հետևեալը։ Յունիսի վերջին հասաւ Թիֆլիս ժողովրդական լուսաւորութեան մինիստր բարօն Նիկոլայ։ Կայսերութեան այլ քաղաքների մէջ մինիստրի այցելութիւնը մի տեսակ տպաւորութիւն է գործում։ Նրան դիմաւորում են, պատգամաւորութիւն են ուղարկում, ազգաբնակութեան կարիքներն են յայտնում և այլն։ Մեզ մօտ այդպիսի ոչինչ չը կար։ Մինչև անգամ պաշտօնական լրագիրը հարկաւոր չը համարեց յայտնել մինիստրի գալը և միայն մայրաքաղաքների լրագիրները ստանալուց յետոյ, որոնց մէջ Թիֆլիսից հեռագիր կար մինիստրի գալու մասին, հաբևանցի կերպով յիշեցին, որ մինիստրը եկել է Թիֆլիս և ապրում է իր Բետանիա կալուածքի մէջ։

Այդպիսի անտարբեր վարմունքը այն անձի վերաբերութեամբ, որ ռուսաց լուսաւորութեան առաջնորդ է, շատ հասարակ կերպով է մեկնվում։ Մինիստրը եկել է մեզ մօտ իբրև մասնաւոր մարդ, իբրև կայուածատէր։ Ցայտնի է, որ Կովկասի վրա կայսերութեան մինիստրները իշխանութիւն չունեն. Կովկասեան փոխարքան փոխարինում է բոլոր մինիստրներին։ Ուսումնարաններին այցելելու մասին առաջարկութիւնը նա մերժեց, պատճառ բերելով, որ այդ ուսումնարանները անմիջապէս չեն ենթարկվում նրա իրաւասութեանը, իսկ այցելել նրանց իբրև հիւր նա չէ ցանկանում, որովհետև առանց այցելութեան էլ նրանք շատ լաւ յայտնի են իրան։

Մինիստրի գալուստը մի քանի յոյսեր զարթեցրեց տեղական ազգաբնակութեան մէջ։ Տեղական հասարակութիւնը անհամբերութեամբ սպասում է, որ տեղական լեզուները ուսումնարանների մէջ քաղաքացիութեան իրաւունք ստանան։

Տեղական ինտելիգենցիան մտադրվեցաւ ուղարկել մինիստրի մօտ մի պատգամաւորութիւն իր կրթողական պակասութիւնները յայտնելու համար, այսինքն. խնդրել, որ տեղական լեզուների ուսուցիչների պետական ծառայութեան հաշուելը վերականգնվի, այդ լեզուները գիմնազիաների մէջ պարտադիր դարձնել և մտցնել սկզբնական կրթութիւնը մայրենի լեզուով։ Մասնաւոր կերպով տեղեկացան, արդեօք կընդունի մինիստրը պատգամաւորներին։ Բարօն Նիկոլայը չը կամեցաւ ընդունել պատգամաւորներին, հիմնվելով վերոյիշեալ պատճառների վրա, բայց նկատեց, որ կատարելապէս համակրում է այդ խնդիրքին և կը նպաստի նրան պատահած ժամանակ։ Բայց իսկապէս միայն ուսուսումնարանը չէ, որ կարօտ է մայրենի լեզուի վերականգմանը. դատարանին նա աւելի էլ անհրաժեշտ է։ Տեղացիները չեն գնում հեռու և չեն խնդրում, որ դատաստանավարութիւնը մայրենի լեզուով կատարվի, ոչ, նրանց ցանկութիւնները աւելի չափաւոր են։ Նրանք խնդրում են թոյլ տալ տեղացի դատաւորներին հասկանալ իրանց մայրենի լեզուն։ Թէպէտ այդ բանը օտարոտի է, բայց ես իսկոյն կը մեկնեմ, թէ բանը ինչումն է։ Ասենք թէ հաշտարար դատաւորը վրացի է, նրան գիւղացին մի գանգատ է բերում։ Գործի քննութեան ժամանակ գանգատաւորը վրացերէն է խօսում. հէնց որ նա վերջացնում է գանգատը, հաշտարար դատաւորը դիմում է թարգմանին հարցով. «ի՞նչ ասաց»։ Թարգման կոտրված ռուսերէն լեզուով պատմում է գանգատի բովանդակութիւնը։ Գիւղացին աչքերը չռում է. նա չէ կարող հասկանալ, թէ դատաւորին ի՞նչ հարկաւոր է թարգմանութիւնը, քանի որ նա վրաց լեզուն թարգմանչից աւելի լաւ գիտէ։ Վերջանում է գործի քննութիւնը. դատաւորը ռուսաց լեզուով կարդում է վճիռը և առաջարկում է թարգմանչին թարգմանել կողմերին, որովհետև ինքը այդ բանն անելու իրաւունք չունի։ Հարց է ծագում, թէ ի՞նչի համար է այս բոլորը։ Չէ՞ որ այդ ժամանակամիջոցի ընթացքում դատաւորը կարող էր մի քանի գործեր քննել։ Եկէք ու բան հասկացրէք ժողովրդին, երբ նա այդպիսի դրութիւն է տեսնում. մեկնեցէք, թէ ի՞նչի հաշտարար դատաւորը պէտք է ցոյց տայ, որ չէ հասկանում գանգատվողին։ Բայց երևոյթի մեկնութիւնը գտնում են մանր ադվոկատները. նրանք ասում են, որ այդ բանն անվում է, որպէս զի գանգատվողները պաշտպաններ վարձեն, որովհետև օրէնքը հոգում է նրանց մասին... առանց դրան նրանք կարող են շփոթվել և տանուլ տալ գործը։ Բայց իսկապէս դա շատ հասարակ գործ է. բաւական է ոչնչացնել „տեղական հրահանգը“, որ արգելում է դատախօսութիւնը տեղական լեզուներով և թոյլ տալ դատաւորներին, որ նրանք հասկանան գանգատվողներին, ինչպէս դատաստանական վերանորոգութեան ժամանակն էր, այդ հրահանգը տալուց առաջ։

Կասեմ մի քանի խօսք Բզիբի անտառների մասին, որ այնքան գրաւել է Ս. Պետերբուրգի լրագրութեանը։ Այդպիսի գործեր մեզ համար զարմանալի չեն։ Տարածված լուրերի հակառակ այդ գործը չանցաւ ցածր հիմնարկութիւններից։ Ընդհակառակը ստորին հիմնարկութիւնները ոգատեցին գործը։ Իշխան Թումանովի ամբողջ անաղութիւնը նրանից է, որ նա գործը սկսեց բարձր հիմնարկութիւններից։ Զը նայելով, որ իշխան Թումանով ունի ի Տէր Հագուցեալ Կայսրի Բարձրագոյն հրամանը, որ սկզբունքով թոյլ է տալիս Բզիբի անտառը Թումանովին կապալով տալը „այն պայմաններով, որ հարկաւոր կը համարէ տեղական վարչութիւնը“ բայց զինուորական ժողովրդական վարչութիւնը, որին ենթարկված է Սուխումի շրջանը, ամեն տեսակ արգելքներ է դնում, որպէս զի այդ անտառը առանց աճուրդի մասնաւոր մարդու ձեռքը չընկնի։ Կասկած չը կայ, որ աճուրդ կը նշանակվի։ Լուր է տարածված, որ այդ գործի մէջ բացի իշխան Թումանովից ազդեցութիւն ունեցող այլ անձինք էլ են խառնված։ Մամուլի շնորհիւ այդ գործը այնքան նշանաւոր ուղղութիւն ստացաւ, որ անհրաժեշտ է այդ անտառի կապալով տալը հասարակ ձևով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ս. Պետերբուրգից մեզ գրում են։ Անուանի հարուստ հայ վաճառական, ստավրապոլցի պ. Պօպով խոստացել է կտակել Նոր-Նախիջևանի բէալական ուսումնարանին 120,000 ռուբլի, այն անհրաժեշտ պայմանով, որ յիշեալ ուսումնարանում բոլոր առարկաները աւանդվեն հայոց

—Դուք վիրաւորում էք ինձ, պարոն....

—Ներեցէք խնդրեմ։ Բայց կարելի է հարցնեմ ձեր ծնողները ովքեր են։

—Հայրս փինաչի է, իսկ մայրս կար անող։

—Ներեցէք խնդրեմ, ես խօսքս յետ եմ առնում, ես չը գիտէի որ ձեր ծնողները այդ տեսակ բարձր դիրք ունեն հասարակութեան մէջ։

Մ. գաւառական քաղաքի մէջ ծանօթանում եմ հարուստ կալուածատէր Թ-ի հետ։

—Դուք ուսում առած մարդ էք, մի լաւ խորհուրդ տուեցէք ինձ, դիմում է ինձ իմ նոր ծանօթ կրեսոսը, վեց հազար դեսիատին տարածութեամբ հող ունեմ, բայց այդ ահագին հողից, որի վրա կան անտառներ, այգիներ, վարելահողեր, ջուր, վերջապէս ամեն բան, տարեկան միմիայն 300 ռուբլ եմ ստանում.... ինչ անեմ։

—Ծախեցէք ձեր հողերը, քանի որ ինքներդ կառավարել չը գիտէք։

—Այդ ինչպէս կարելի է. ոչ, երբէք չեմ ծախի, որդուս համար ժառանգութիւն պէտք է թողնեմ։

Իմ ճանապարհորդութեան ժամանակ պատահեց ինձ ծանօթանալ և գաւառական ինտելիգենցիայի հետ։ Գաւառական ինտելիգենցիան մեզանում մեծ մասամբ բաղկացած է պաշտօնեաներից ու նրանց ընտանիքներից։

Պաշտօնեաներից մինը գանգատվում է թէ չարժէ ծառայել, ռոճիկ քիչ են տալիս, կինը գանգատվում է թէ կեանքը դարդակ ու աննպատակ է, մի ուրիշ պաշտօնեայ ասում է թէ պատրաստ է մի այլ գործով էլ պարապել, մանաւանդ ազգային, հասարակական գործով, բայց ժամանակ չունի։

—Դուք տիկին, պատասխանում եմ ես, շատ ազատ ժամանակ ունէք. կարդացէք գրքեր, դասեր տուեցէք դպրոցներում, տան տնտեսութեամբ պարապեցէք, իսկ դուք պարոններ, ձեր ծառայութեամբ խօ առաւօտներ էք զբաղված միայն, իսկ ճաշից յետոյ միշտ մի այլ գործով կարող էք պարապել, մինչև անգամ փող աշխատել....

—Ի՞նչ էք ասում, կանչեցին նրանք ամենքը միաձայն, քաս երբ պէտք է թուղթ խաղանք....

Ես ոչինչ չը պատասխանեցի։

* * *

Ծանօթացայ նոր ուսումնաւարտ հայ համալսարանական երիտասարդների հետ։ Նրանց միայն ասեցի թէ ով եմ։

Իսկոյն սկսեցին գանգատվել ինձ և համալսարանի վրա, և կեանքի վրա....

—Ի՞նչի ենք եկել այս երկիրը, ինքներս չը գիտենք, ասում էին նրանք մեաբերան։ Այժմ չը գիտենք ինչ անենք, ինչ սկսենք, ինչով պարապենք։ Ուսումնարանը, գիտութիւը, համալսարանը մեզ ոչինչ իդէալներ չը տուեցին։

—Պետական ծառայութիւն ինչի չէք մտնում։

—Չը գիտենք։

—Առուտուրով պարապեցէք։

—Չենք ուզում։

—Արուեստներով։

—Նոյնպէս։

—Դրականութեամբ։

—Չարժէ, և ինչ կարելի է յայտնել, ոչինչ։

—Վերադարձէք այն գիւղը, որտեղից դուրս էք եկել, այնտեղ նորից մտէք ձեր ընտանիքը, ձեր շրջանը. մեծ մասամբ գիւղացիների որդիք էք, դարձէք ուսում առած գիւղացիներ։

—Այդ շատ նեղ ասպարէզ է, մենք դրա համար խօ չենք սովորել համալսարանում, Դարվին, Ստիւարտ-Միլլ, Բօկլ ու Կլօդ-Բէրնար կարդացել որ գիւղացի դառնանք....

—Դուք խօ ասում էք որ ոչինչ իդէալներ չունէք, ուրեմն բաւականացէք նեղ շրջանով, գործնական աշխատանքով մայրենի հողի վրա....

—Ոչ, մենք չենք ասում թէ ինքներս իդէալներ չունենք, մենք ունենք շատ լայն իդէալներ, բայց կեանքի մէջ նրանց համար գործադրութիւն չենք գտնում....

* * *

Ամեն տեղի աշխարականների բերանից գանգատներ լսեցի հոգևորականների վրա։

—Մեր հոգևորականները սառեցրին մեզ դէպի եկեղեցին, կրկնում էին ինձ ամեն տեղ. մենք եկեղեցի չենք գնում, ինչ կայ այնտեղ։

Ուրիշ կողմից հոգևորականները գանգատվում են աշխարհականների վրա։

—Էլ հաւատ չը կայ մեր ժողովրդի մէջ, եկեղեցիները դատարկվում են, էլ սիրտ չը կայ քարոզ ասելու, մարդ չէ լինում եկեղեցում, ասում էին մեր հայրերը։

Բացի սրանից մի քահանայ չը տեսայ որ չը գանգատվէր նոյն քաղաքի բոլոր միւս քահանաների վրա, եպիսկոպոսի վրա, կոնսիստորիայի վրա, հոգևոր իշխանութեան վրա։ Վարդապետները ամեն տեղ և նոյն իսկ Էջմիածնում գանգատվում էին Էջմիածնի վրա։

Նոյն գանգատները լսեցի և մեր դպրոցներում։ Ուսուցիչները—գանգատաւոր են միւս ուրում։ Ուսուցիչները—գանգատաւոր են միւս ուսուցիչներից, ուսուցիչները—տեսչից, տեսուչը—ուսուցիչներից և հոգաբարձուներից, տեսուչը և ուսուցիչները—հոգաբարձութիւնից, հոգաբարձուները—տեսչից, ուսուցիչներից, աշակերտներից և նրանց ծնողներից, ծնողները—դպրոցից, աշակերտները—իրանց ծնողներից և դպրոցներից....

* * *

Վերջապէս բաղդ ունեցայ Էջմիածնում ծանօթանալ Մանկունու հետ և պէտք է խոստովանվեմ որ համոզվեցի թէ դա մեր ժամանակվանվեմ որ համոզվեցի թէ դա մեր ժամանակակից հայ հասարակութեան մէջ միակ մարդ է, որ կատարելապէս գոհ է իր դրութիւնից։

ԱՍԻԱՑԻ